ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ՀԱՄԱԿԱՐԳ

2013թ. հունվարի 1-ից ԱՊՊԱ ոլորտում գործում է Բոնուս–Մալուս համակարգը, որն ապահովագրավճարների զեղչերի (բոնուսների) և հավելավճարների (մալուսների) համակարգ է:
Կախված ապահովադրի ապահովագրական պատմությունից՝ ապահովադիրը ստանում է Բոնուսային կամ Մալուսային դաս, ինչի հիման վրա էլ հաշվարկվում է ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարը:
Յուրաքանչյուր Բոնուս-Մալուս դասին համապատասխանում է որոշակի գործակից, որի կիրառմամբ փոփոխվում է ապահովագրավճարի մեծությունը:
Բոնուս-Մալուս դասերը սահմանվում են ստորև ներկայացված աղյուսակում.

ԲՄ ԽՈՒՄԲԸ	ԲՄ ԴԱՍԸ	ԲՄ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅԻՆ	Դաս 22	250%
	Դաս 21	250%
	Դաս 20	250%
	Դաս 19	200%
ՄԻՋԻՆ ՌԻՍԿԱՅԻՆ	Դաս 18	144%
	Դաս 17	140%
	Դաս 16	132%
	Դաս 15	124%
	Դաս 14	116%
	Դաս 13	112%
	Դաս 12	108%
	Դաս 11	104%
ԲԱԶԻՍԱՅԻՆ	Դաս 10	100%
ՑԱԾՐ ՌԻՍԿԱՅԻՆ	Դաս 9	97%
	Դաս 8	94%
	Դաս 7	91%
	Դաս 6	88%
	Դաս 5	85%
	Դաս 4	82%
	Դաս 3	75%
	Դաս 2	65%
	Դաս 1	50%

Աղյուսակն ունի 22 դաս, որից 9-ը՝ բոնուսային (գործակիցը փոքր է 100%-ից), իսկ 12-ը՝ մալուսային (գործակիցը մեծ է 100%-ից):
Դաս 10-ը համարվում է բազիսային դաս (գործակիցը հավասար է 100%):

Այսպիսով Բոնուս-Մալուս համակարգի շնորհիվ կարգապահ ավտոսեփականատերերը վճարում են ավելի ցածր ապահովագրավճարներ, իսկ ռիսկային ավտոսեփականատերերը՝ բարձր ապահովագրավճարներ:

ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների հաշվարկման ժամանակ Բոնուս-Մալուս համակարգի կիրառման կանոններին կարող եք ծանոթանալ հետևյալ աղբյուրներից.

- Բոնուս-Մալուս համառոտ նկարագիրը
- ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ (Հավելված 3)